ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1556 06.07.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունիսի 27-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի ՁՊՎ և արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ.

4568
09 07 15

Թերություններ՝

1. Բուժսենյակի դեղարկղը ամբողջությամբ գտնվում էր փոշոտ վիճակում, իսկ բժշկական սավանը և սպիտակեղենը կեղտոտ էին:
2. Ընդհանուր ՁՊՎ-ի խցերը փոշոտ էին:
3. Սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում, առկա էր տհաճ հոտ, իսկ զուգարանակոնքի ջրամատակարարման խողովակը ջուր էր թողնում:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՆ № 3246
06 07 2015 թ.

Խախտումներ՝

1. Այցելության ընթացքում Դիտորդական խմբի անդամները արձանագրեցին, որ ՁՊՎ-ում պահվող երկու անձիք տվյալ ամբողջ օրը սնունդ չէին ստացել: Դիտորդական խմբի այն հարցին, թե ինչն է պատճառը, ՁՊՎ-ի վարչակազմը նշեց, որ <<որ հեսա կլինի, հեսա կբերեն>>: Սննդի բելելը վերաբերում էր ժամը 11.50-ից մինչև 15.00 ընկած

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ժամանակահատվածին և այդպես էլ Խմբի անդամները չարձանագրեցին սնունդ տրամադրելու փաստը:

Նշվածի արդյունքում կասկածի տակ է դրվում Ձեր 18.06.2015թ-ին տրված թիվ 2/2-1-2002 գրության մեկնաբանությունը:

2. Ընդհանուր <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ձերբակալման ամսաթիվը և ժամանակը աղյուսակում, անձին փաստացի ազատությունից զրկելու /բերման ենթարկելու կամ ձերբակալելու/ ժամը չի նշվում, այլ նշում է ՁՊՎ ընդունելու ժամը և օրը, որը տվյալ գրանցամատյանի պահանջի խախտում է, և որի արդյունքում էլ որոշ ձերբակալվածներ օրինակ՝ Գևորգ Տարոնիկի Անդիկյանը, Ցոլակ Անդրանիկի Հովհաննսիյանը և այլոք 72 ժամը լրանալուց րոպեներ առաջ են դուրս բերվել և տեղափոխվել դատարան: Հնարավոր չէր տվյալ ժամանակահատվածում քննարկվեր նրանց խափանման միջոց կիրառելու հարցը և պարզ չէ նրանց 72 ժամը խախտվել է, թե ոչ:

Դիտորդական խումբը ևս մեկ անգամ փաստում է, որ գրանցամատյանները լրացվում են թերություններով և խախտումներով, և Ձեր այն պնդումը, որ գրանցամատյաններում լրացվում է արգելանքի վերցնելու պահը՝ տվյալ դեպքում այդպես չէ:

Ներկայացված բոլոր փաստերի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում Դիտորդական խումբը կտրամադրի փաստը հաստատող լուսանկարները:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-66-36, Ֆաքս՝ (010) 59-63-11

№ 212-1-2509 «31» 07 2015 թ.

Ձեր 06.07.2015թ. թիվ 2621/1556 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հունիսի 27-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Արձանագրված թերությունները վերացվել են:

Խախտումներ.

1. Դիտորդների խմբի այցելության պահին ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ում պահվող երկու անձանց ըստ օրվա կարգացուցակի առավոտյան ժամը 08.45-ին տրամադրվել է սնունդ, իսկ ժամը 14.00-15.00-ն ներառյալ սնունդ չտրամադրելու հանգամանքը կապված է եղել սնունդ մատակարարող ընկերությունում եղած տեխնիկական թերությունների հետ, որոնք վերացնելուց անմիջապես հետո ժամը 15.20-ին ձերբակալվածներն ապահովվել են տաք սննդով:

2. Ձերբակալված Գ.Անդիկյանը ոստիկանության Արմավիրի բաժին բերման է ենթարկվել 21.02.2015թ. ժամը 17.30-ին և նույն օրը ժամը 19.55-ին ներկայացվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն, որտեղ ժամը 20.00-ին քննիչի կողմից ձերբակալվելուց հետո ժամը 20.20-ին մուտք է գործել Արմավիրի բաժնի ՁՊՎ:

Ձերբակալված Ց.Հովհաննիսյանը նույնպես ոստիկանության Արմավիրի բաժին բերման է ենթարկվել 21.02.2015թ. ժամը 17.30-ին և ժամը 19.55-ին ներկայացվել ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն, որտեղ ժամը 20.20-ին ձերբակալվելուց հետո ժամը 23.20-ին տեղափոխվել է ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ:

24.02.2015թ. ժամը 17.20-ին Գ.Անդիկյանը և Ց.Հովհաննիսյանը տեղափոխվել են ոստիկանության Արմավիրի բաժնին կից Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան և մինչև նրանց արգելանքի վերցնելու պահից 72 ժամը լրանալը՝ կալանավորվել են:

Գ.Անդիկյանի և Ց.Հովհաննիսյանի վերաբերյալ ոստիկանության Ամավիրի բաժնի ավագ տեսուչ-հերթապահը, ով ներկայումս ոստիկանությունում չի ծառայում, <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի թիվ 7-րդ՝ <<ձերբակալման ամսաթիվը և ժամանակը>> սյունակում, անձանց արգելանքի վերցնելու ժամերի փոխարեն անփութորեն նշել է ՁՊՎ ընդունելու ժամը:

Ոստիկանության Արմավիրի բաժնի հերթապահ մասի պետին հանձնարարվել է հսկողության տակ պահել ՁՊՎ-ում գործածվող գրանցամատյանների վարման կարգը և միջոցներ ձեռնարկել հետագայում մատակարար ընկերությունում նմանատիպ խնդիրներ լինելու դեպքում, ՁՊՎ-ում պահվող անձանց ժամանակին ապահովել սննդով:

ՀՀ ոստիկանության շտաբ